# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

# ОБРАЗОВАНИЕ И НАУКА В АРЦАХЕ

*5–6 2004*

Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար

*Հիմնադիր՝* ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարություն

Научно-методический и научно-популярный журнал для учащихся и учителей

*Учредитель:* министерство образования, культуры и спорта НКР



***Գլխավոր խմբագիր՝***
Ռ. Մարտիրոսյան
***Պատասխանատու խմբագիր՝***
Կ. Աթայան
***Խմբագրի տեղակալ՝***
Մինասյան
***Գեղարվեստական խմբագիր՝***
Մ. Զիլֆուղարյան
***Պատասխանատու քարտուղար՝***
Ս. Մայիլյան
***Խմբագրական կոլեգիա՝***
Աբրահամյան Հ.
Ավագյան Ռ.
Աղալովյան Լ.
Աղուզումցյան Ռ.
Ապրեսյան Մ.
Բաբախանյան Ա.
Բարսեղյան Վ.
Բաղդասարյան Գ.
Գևորգյան Ռ.
Գրիգորյան Հ.
Գրիգորյան Ս.
Ձոլյան Ս.
Թավադյան Լ.
Խաչիյան Է.
Խաչատրյան Մ.
Կիրակոսյան Ա.
Հակոբյան Վ.
Հայրապետյան Ս.
Ղազարյան Է.
Ղազինյան Գ.
Ղուլյան Ա.
Ղուկասյան Ա.
Մաղալյան Վ.
Մանասյան Ա.
Մելքումյան Ս.
Մկրտչյան Ծ.
Մովսիսյան Ա.
Մովսիսյան Յու.
Ներսիսյան Լ.
Ներսիսյան Ա.
Շաքարյան Հ.
Շեկյան Լ.
Պետրոսյան Լ.
Պետրոսյան Լ. Ն.
Սարգսյան Ա.
Սարգսյան Հ.
Սաղյան Ա.
Սիմոնյան Ա.
Սուվարյան Յու.
Տեր-Մինասյան Ա.
Փախչանյան Բ.
Քամալյան Օ.


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
## СОДЕРЖАНИЕ


**Խմբագրական**
Редакционное

### Գիտահանրամատչելի
### Научно-популярное

Օդա-ջրածնային խառնուրդների այրման, պայթման և դետոնացիայի քիմիական կարգավորումը *Վ. Ազատյան*..........5
Химическое регулирование горения, взрыва и денотации водородо-воздушных смесей *В. Азатян*
Ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների հեռանկարային ուղղությունների զարգացումը սինխրոտրոն ճառագայթման կիրառմամբ *Վ. Հարությունյան*..........13
Перспективные направления развития современной науки и технологии с применением синхротронного излучения. *В. Арутюнян*
Հայտնի պարբերականը Հայաստանի և Արցախի մասին..........19
Известное периодическое издание об Армении и Арцахе

### Գիտամեթոդական
### Научно-методическое

Օսմանյան զորքերի ներխուժումն Անդրկովկաս և կովկասյան թուրքերի կողմից Զանգեզուրը զավթելուն ուղղված առաջին գործողությունները *Ա. Սիմոնյան*..........*27*
Вторжение Османских войск в Закавказье и первые действия кавказских турок, направленные на оккупацию Зангезура. *А. Симонян*
"Ուրարտու"- ի պատմագիտական հարցի շուրջ *Ա. Հայթյան*..........*32*
Вокруг историко-научного вопроса Урарту *А. Айтян*
Գեղագիտականի կարևորությունը *Գ. Երնջակյան*..........*37*
Значимость эстетического *Г. Ернджакян*
Կուրսային և դիպլոմային աշխատանքների նախապատրաստական փուլի առանձնահատկությունները *Հ. Հովհաննիսյան*..........41
Особенности подготовительного этапа курсовых и дипломных работ *Г. Ованнисян*
Ուսանող մարզիկների հետ տարվող անհատական աշխատանքների կազմակերպման իմ փորձից *Վ. Բաբայան*..........45
Из моего опыта организации индивидуальных работ со студентами-тренерами *В. Бабаян*
Մոդելային փորձի օգտագործումը վիճակագրության հիմնական հասկացությունների ձևավորման համար *Մ. Թումանյան*..........48
Использование модельного опыта в формировании основных понятий статистики. *М.Туманян*
Թթվեցրած ջրի էլեկտրոլիզը և Ֆարադեյի օրենքը *Գ. Պետրոսյան, Պ. Պետրոսյան*..........54
Электролиз окисленной воды и закон Фарадея *Г. Петросян, П. Петросян*
Խնդիրների և վարժությունների դերը աշխարհագրության դասերին *Գ. Հովհաննիսյան*.....56
Роль задач и упражнений на уроках географии *Г. Ованнисян*
«Կենսոլորտի ֆիզիկա» դասընթացի անհրաժեշտության մասին *Կ. Աթայան*..........64
О необходимости курса "Физика биосферы" *К. Атаян*

## Մանկավարժություն և հոգեբանություն
## Педагогика и психология


ՀՀ կրթության համակարգի կառավարման գործառույթները *Ա. Ենգիբարյան*........70
Основные функции управления системой образования РА *А. Енгибарян*
Մասնագիտական ընտրության հոգեբանական հիմունքները *Ռ. Աղուզումցյան, Է. Գեղամյան*........77
Психологические основы профессионального отбора *Р. Агузумцян, Э. Гегамян*
Կրեատիվ պոտենցիալի զարգացումը բուհական ուսուցման տարիներին *Ռ. Աղուզումցյան, Դ. Հայրապետյան*........82
Развитие креативного потенциала в годы вузовского обучения *Р. Агузумцян, Д. Айрапетян*
ՀՀ և Ֆրանսիայի կրթական համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն *Մ. Ավետիսյան*........88
Сравнительный анализ управления системами образования РА и Франции *М. Аветисян*


## Օտար լեզուներ
## Иностранные языки


«Ներկայի ներկան» սպորտային լրագրության մեջ *Գ. Բարսեղյան*........95
Понятие "настоящего" в спортивном репортаже *Г. Барсегян*
Some Comments on the Concept and Use of Hedges in Scientific Discourse. *Ch. Pogossyan*........100
«Հեջի» հասկացության և կիրառության վերաբերյալ որոշ մեկնաբանումներ գիտական խոսքում *Ք. Պողոսյան*
Using Critical Thinking Strategies in the Legal English Classroom. *Sharon Wood*........104
Քննադատական մտածելակերպի եղանակների կիրառությունը իրավաբաններին անգլերեն ուսուցանելիս *Շ. Վուդ*


## Տնտեսագիտություն, իրավագիտություն, փիլիսոփայություն
## **Экономика, юриспруденция, философия**


Իրավաբանական պատասխանատվության հարցի մասին *Ն. Ափյան*........110
К вопросу о юридической ответственности. *Н. Апиян*
Ամուսինների համատեղ սեփականությունն ըստ ՀՀ օրենսդրության *Հ. Աբրահամյան*........118
Совместная собственность супругов по конституции РА *Г. Абрамян*
ՀՀ աշխատանքի շուկան և բնակչության արտագաղթը *Ա. Խառատյան, Ն. Քոչինյան*........127
Рынок труда РА и эмиграция населения *А. Харатян, Н. Кочинян*
Միջին խավի ձևավորման գործընթացը *Է. Զոհրաբյան*........132
Процесс формирования среднего слоя *Э. Зограбян*
ԼՂՀ-ի ներքին և օտարերկրյա ներդրումների փոխադարձ կապը և սահմանային հակվածությունն իրական ներդրումների նկատմամբ *Դ. Աղաջանյան*........140
Взаимосвязь иностранных и внутренних вкладов НКР и предельная склонность к реальным вкладам *Д.Агаджанян*


## Լրագրություն և գովազդ
## Журналистика и реклама


Մեր հարցազրույցը *Գ. Անանյան*........142
Наше интервью *Г. Ананян*
Հայկական հեռուստագովազդի լեզուն *Ա. Աղիխանյան*........145
Язык армянской телерекламы! *А. Адиханян*


## 4-րդ Աթայանական ընթերցումներ
## 4-ые Атаяновские чтения


4-րդ Աթայանական ընթերցումներ *Լ. Գրիգորյան*........150
4-ые Атаяновские чтения *Л. Григорян*
Մտային մոդելների կիրառությունները ֆիզիկայի դասավանդման ընթացքում *Լ. Պետրոսյան*........154
Применение мысленных моделей в процессе преподавания физики *Л. Петросян*


## Գիտահետազոտական
## Научно-исследовательское


Մարմնի զույգ անդամներ արտահայտող բառերը հայերենում *Գ. Ներսիսյան*........157
Слова, обозначающие парные части тела, в армянском языке *Г. Нерсисян*
Ձայնավորների հնչյունափոխությունը Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» գրաբարյան բառերում *Ռ. Շաբոյան*........161
Чередование гласных звуков в древнеармянских слова "Судебника" Смбата Спарапета *Р. Шабоян*
Կապույտ գույնի երբերանգները Ա.Բլոկի բանաստեղծություններում և դրանց հայերեն թարգմանություններում *Գ. Հակոբյան*.....166
Оттенки синего цвета в произведниях А.Блока и в их армянских переводах *Г. Акопян*
Գրաբարյան բառերը և ձևաբանական կաղապարները Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) բարբառային ստեղծագործություններում *Ե. Միրզոյան*........172
Древнеармянские слова и морфологические модели в древнеармянских произведениях Мелик-Шахназаряна *Е.Мирзоян*

# ԿՐԵԱԿՏԻՎ ՊՈՏԵՆՑԻԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՈՒՀԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ռ. Աղուզումցյան, Դ. Հայրապետյան

*Երևանի պետհամալսարան*

Статья посвяшяна проблемам креативности как создания нового. Обсуждаются мыслительные процессы. интеллектуалные и индивидуальные качества личностьи как качества взаимосвязанные с креативным процессом. Представляны также результаты исследования развития креативного потенцила в годы университетской учебы .

Գիտության զարգացման ժամանակակից փուլում կրեատիվ մոտեցումն ավելի ու ավելի է կարևորվում ինչպես գիտական և ստեղծագործական, այնպես էլ արդյունաբերության բազում ոլորտներում: Մշակվում են բազմաթիվ մեթոդիկաներ՝ ուղղված ստեղծագործականության զարգացմանը, ստեղծվում են կրեատիվ աշխատախմբեր և ստեղծագործականության օրինաչափությունների ուսումնասիրման բազմաթիվ ինստիտուտներ: Արտասահմանում հատկապես կարևորվում է երիտասարդ գիտ. աշխատողների կրեատիվության զարգացումը: Սակայն պարզ է, որ կրեատիվության զարգացման արմատները պետք է փնտրել ավելի վաղ՝ բուհ-ում և, ինչու՞ ոչ, դպրոցում:

Կատարված հետազոտական աշխատանքում շեշտադրված են անձնային առանձնահատկությունների ու կրեատիվության կապը և համալսարանական ուսուցման տարիների վերջինիս զարգացման օրինաչափությունները:

Կրեատիվության և նրա զարգացման օրինաչափությունները ավելի լավ հասկանալու համար հարկ է ավելի մանրամասն քննարկել որոշ հոգեկան գործընթացներ և որակներ, որոնք ուղղակի և անուղղակի պայմանավորում են կրեատիվ պոտենցիալի զարգացումը: Դրանց շարքում կարևորագույն տեղ են զբաղեցնում մտածողական գործընթացները, ինտելեկտուալ կառույցները, որոնք, ավանդաբար, հոգեբանական գիտության ներքո համարվել են խնդրային իրավիճակների լուծման և ստեղծագործական որոշումների ընդունման կենտրոնական օղակներ, ինչպես նաև անձնային հոգեկան առանձնահատկությունները, որոնք սկսել են կարևորվել ժամանակակից ուսումնասիրություններում:

Ստեղծագործականության ուսումնասիրություններում մեծ դեր ունի հոգեբանական գիտության մի ոլորտ, որը կոչվում է էվրիստիկա: Այս ուղղության նպատակն է հայտնագործությունների և գյուտարարությունների օրենքների և մեթոդների ուսումնասիրումը [5.էջ395]: Էվրիստիկան ստեղծագործական աշխատանքում կարևորում է մտածողության գործընթացի դերը և այն դիտում որպես հիմնարար գործընթաց խնդրային իրավիճակների լուծման համար:

Դեռ վաղուց Էդվարդ դե Բոնոն իր՝ «Նոր մտքի ծնունդը» մենագրության մեջ առանձնացրել է ուղղաձիգ(շարքային) և լատերալ(ոչ շարքային) մտածողությունները՝ մանրակրկիտ քննարկելով դրանցից յուրաքանչյուրը: Նրա աշխատության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնարար երեք դրույթները.

1. Որպես նոր մտքեր ստանալու եղանակ շարքային մտածողությունը սահմանափակ է:

2. Նոր մտքեր ստանալու համար անհրաժեշտ է օգտագործել ոչ շարքային (լատերալ) գործընթացներ:

3. Ոչ շարքային մտածողության նպատակն է ստանալ նոր մտքեր, որոնք պետք է լինեն ավելի պարզ, խորին և արդյունավետ [1]:

Խնդրային իրավիճակներում, որոնք ծագում են առօրյա և գիտական գործունեության մեջ, լուծման ընդունման խնդիրը բարդ և բազմագործընթացային համակարգ է. բազմաթիվ գիտնականներ միանշանակ նշում են, որ մտածողական գործընթացների առավել արդյունավետությունը

նախ և առաջ կախված է խնդրի գիտակցումից և դրա ձևակերպումից [2]: Այդ բավական լավ ցույց է տալիս որոշման ընդունման մոդելը, որը ներկայացնում ենք ստորև:

Սխեմա 1




☐ - *համատեքստ(սոցիալական փոփոխականներ, տեխնիկական և անձնային ասպեկտներ, որոշման տիպը, կարևորությունը):*

Ինչպես նշեցինք, մտածողական գործընթացներից զատ կարևորվում են ինտելեկտուալ կառույցները:

Ինտելեկտը ինքնին հանդիսանում է անձի բարդ և դժվար սահմանվող հասկացություններից մեկը: Խնդիրն առավել ևս բարդանում է, երբ փորձում ենք դիտարկել կրեատիվությունը նրա համատեքստում: Հետազոտությունների արդյունքները խիստ հակասական են, սակայն կարելի է դուրս բերել որոշակի հիմքեր, որոնց վրա հենվելով, կարելի է հասնել գլխավոր նպատակներից մեկին՝ արդյունավետ օգտագործելով ինտելեկտուալ կառույցները, ավելի ստեղծագործաբար մոտենալ առաջացող խնդիրներին և գտնել ավելի արդյունավետ լուծումներ:

1921 թ-ին «Journal of Educational Psychology» թերթի խմբագրությունը առաջարկել է 14 հանրահայտ հոգեբանների կողմից տրված ինտելեկտի մեկնաբանությունները: Դրանք միմյանցից խիստ տարբերվում էին, սակայն հիմնականում առկա էր 2 գաղափար՝ ինտելեկտը սեփական փորձի վրա սովորելու և շրջակա միջավայրին հարմարվելու ընդունակությունն է: Հետաքրքիր էր Ստերնբերգի մոտեցումը. նա ինտելեկտի տարբերակող առանձնահատկությունը համարում էր մտածողության երեք տիպերի առկայությունը՝ ստեղծագործական, գործնական, վերլուծական: Ստեղծագործական մտածողությունը՝ որպես կրեատիվություն, նորը ծնելու ընդունակություն, կազմում է հաջողության ինտելեկտի կարևորագույն բաղադրիչներից [7]:

Ըստ Ջ. Ռեզուլիի՝ ինտելեկտուալ օժտվածությունը երեք նշված գործոնների հատման դաշտն է:

Այստեղ կրեատիվությունը դուրս է գալիս իր նեղ սահմաններից (դիվերգենտ մտածողություն) և հանդես է գալիս ավելի լայն համատեքստով՝ ընդգրկել ինչ-որ նորույթ փորձի մեջ(Բարոն), ծնել նոր և օրիգինալ մտքեր (Ուոլլախ), գիտակցել խնդիրը, ստեղծել իրավիճակի պակասող տարրերի մասին վարկածներ (Տորրենս), հրաժարվել մտածողության ստերեոտիպային ձևերից (Գիլֆորդ)

(6)։

Դիագրամ 1




(1- Միջինից բարձր ինտելեկտուալ ընդունակություն.
2- Կրեատիվություն, 3- Մոտիվացիոն համակարգ)։Այս մոտեցման համաձայն՝ կրեատիվությունը ոչ միայն ինտելեկտի բաղադրիչ տարր է, այլև ինքն է որոշ չափով այն պայմանավորում։

Կրեատիվ պոտենցիալի զարգացման օրինաչափությունները ավելի ամբողջական դիտարկելու համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ անձնային առանձնահատկությունների ոլորտին։ Ըստ Թեյլորի՝ տվյալների անձնային առանձնահատկությունների մի որոշակի համակարգ բնութագրում է կրեատիվության մի ձև, մեկ այլ համակարգ ապահովում է մեկ այլ ձևի զարգացումը։ Համապատասխանորեն, նա առանձնացրել է կրեատիվության 5 հիերարխիկ մակարդակ։

1. Արտահայտչական կրեատիվություն. սա անձի մոտ ամենաբնականն է և չի պահանջում անձնային առանձնահատկությունների բարդ հիերարխիկ համակարգ,

2. արդյունաբեր կրեատիվություն. սա պայմանավորված է նորի առաջադրմամբ, սակայն առանց ներքին կապերի և օրինաչափությունների բացահայտման,

3. ստեղծագործական կրեատիվություն. այն արդեն բնութագրվում է նոր կապերի հայտնաբերմամբ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին։ Զուգահեռ բարդանում է նաև այն անձնային առանձնահատկությունների համակարգը, որն ապահովում է կրեատիվության այս մակարդակը,

4. նորարար կրեատիվություն և, վերջապես,

5. հայտնագործչական կրեատիվություն. սա ամենաբարձրագույն մակարդակն է։ Այն գործում է ամբողջապես նոր սկզբունքներով՝ և ենթարկվում նոր օրինաչափությունների [8]։

Չեմբերսի տվյալներով բարձրկրեատիվ անձնավորության հաստատակամությունը և համոզվածությունը հանգեցնում են այն բանին, որ նա քիչ է հաշվի նստում այլ մարդկանց հետ և չի սպասում բարյացակամ վերաբերմունքի։ Նրա յուրահատկությունն այն է, որ նա կարողանում է միավորել երեխայի զարմանքը, երևակայությունը և պարզությունը մեծահասակի իրատեսության և հասուն հմտությունների հետ։ Դայանա Հալպերնը կարծում է, որ քննադատական մտածողություն օգտագործող անձնավորությունները առանձնանում են ճկունությամբ, հաստատակամությամբ, սեփական սխալները ուղղելու պատրաստակամությամբ, ընդունակ են պլանավորելու, օրոնում են փոխզիջումային լուծումներ, ընդունակ են մետակոգնիտիվ մոնիտորինգի [9]։

Առաջինը Ուոլլեսն էր, որը ստեղծագործական գործընթացը բաժանեց 4 փուլերի՝ *նախապատրաստում, ինկուբացիա, արտահայտում, ճշմարտացիության ստուգում* [4,8]։ Սա ոչ միայն պատմական բաժանում է, այլ շրջադարձային պահ կրեատիվության տեսության զարգացման համար։ Ուոլլեսը սրանով նշեց և ցույց տվեց, որ ստեղծագործական լուծումները ոչ թե պատահաբար կամ ինչ-որ անորոշ ուժի կողմից են թելադրվում, այլ ունեն իրենց զարգացման սկզբունքներն ու օրինաչափությունները։ Հարիսը (1959), հենվելով Ուոլլեսի դասակարգման վրա, առաջարկել է վեց փուլ.

- ծանոթացում պահանջներին,
- ինֆորմացիայի հավաքագրում,
- ինֆորմացիայի մշակման համար մտքի ակտիվություն,
- լուծման պատկերացում,
- ճշմարտացիության ստուգում,

- գործնական ներմուծում [8]:

Խորհրդային գիտնական Պոնոմարյովը նշում է, որ բախվելով խնդրային իրավիճակին, մարդը նախ օգտագործում է լուծման պատրաստի, տրամաբանական միջոցները. եթե խնդիրը ստեղծագործական մոտեցում է պահանջում և այդ մեթոդները չեն բավարարում, ապա անձը դիմում է ենթագիտակցական, ինտուիտիվ կառուցվածքներին, որոնք չեն հասնում տրամաբանական մակարդակներին:

Ինչպես նշում է Դե Լոպեսը,այսօր համալսարանի խնդիրն է պատրաստել մասնագետներ, որոնք կարող են մտածել արագ փոփոխվող աշխարհի պայմաններում [5, էջ 20]:

Դպրոցում մենք սովորում ենք մտածել տաքսոնոմիկ կատեգորիաներով, իսկ դա այդեն մտածողական ընդունակությունների վերլուծական ասպեկտն է, բայց այս միջոցի կիրառումը մեծամասամբ սահմանափակվում է արհեստական իրավիճակներով: Եվ երբ ուսանողները կամ ասպիրանտները անհրաժեշտություն են զգում գործել ոչ այնպես, ինչպես դպրոցում են սովորեցրել, այն է՝ ծնել անփական մտքեր, այլ ոչ թե վերլուծել և կրկնել ուրիշներինը, նրանց մոտ բարդություններ են առաջանում: Ինտելեկտուալ կոնֆորմիզմի գործընթացը և կրեատիվության ճնշումը սկսվում են այն պահից, երբ երեխաներին տոհպում են գրել՝ պահպանելով լուսանցքը, և կրկնօրինակել են ուրիշ մարդկանց [7]

Սակայն չի կարելի կարծել, թե կրեատիվությունը բանաձև է, որը կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում: Դա բարդ և երկարատև գործընթաց է, որն ուղեկցվում է բազմաթիվ չանքերի գործադրմամբ՝ [illegible] կողմից մեծամասամբ, առաջարկված ստեղծագործական լուծումների ընդունելիությամբ:

[illegible] առավելագույնս կրեատիվության ձևավորմանը նպաստող ազդակներին [illegible]:

Պատկանում են այնպիսի ազդակներ, ինչպիսիք են՝
- ցանկացած խնդրի նկատմամբ զգայունությունը,
- հայեցակարգային ճկունությունը,
- անկաշկանդությունը,
- խաղային տրամադրությունը,
- հետևանքների գերազանցումը:[3.5]

Էական կարևոր հանգամանքներից է նաև ֆունկցիոնալ ֆիքսացիան, երբ լուծման համար անհրաժեշտ միջոցը չի օգտագործվում ամենասովորական ձևով:

Այս ամենի արդյունքում հոգեբանության ներքո մի քանի գիտնականների կողմից առաջ են քաշվել ստեղծագործական պոտենցիալի զարգացման վարժություններ և ծրագրեր: Ստորև ներկայացված են դրանցից երկու առավել տարածվածները:

Կրեատիվության զարգացման բնական միջոց է նաև Խոդոնեյայի առաջարկած ԿՆՍԻՅ համակարգի զարգացումը:

Կ - Կոմպետենտություն, սա գիտելիքների կազմակերպումն է, որն ապահովում է արդյունավետ որոշումների ընդունումը գործունեության որոշակի ոլորտում:

Ն- Նախաձեռնություն, նոր ինֆորմացիա փնտրելու և գաղափարներ առաջարկելու ինքնուրույն ցանկություն:

Ս - Ստեղծագործականություն, սուբյեկտիվ նորի ստեղծման գործընթացը:

Ի - Ինքնակարգավորում, սեփական գործունեության կառավարման ունակություն:

Յ - Խելքի կառուցվածքի յուրահատկություն, անհատական-յուրահատուկ ինտելեկտուալ մոտեցման ցուցաբերում: Այս համակարգի զարգացումը բերում է կրեատիվության զարգացմանը և հեշտացնում նորի ստեղծման գործընթացը:[6]

Օսբորնի կողմից առաջարկված «ուղեղային գրոհի» մեթոդն այժմ լայնորեն կիրառվում է գիտության տարբեր ոլորտներում[5]: Այն իրականացվում է խմբային միջավայրում և նրա

հիմնական դրույթներն են.

. չկան արգելված մտքեր. արտահայտվում են բոլոր ծնվածները,

. չի քննադատվում ոչ մի գաղափար:

Այս մեթոդի օգնությամբ գտնվում են բազմաքնույթ խնդիրների արդյունավետ լուծումները:

Այս ամենը հիմք են տալիս մտածելու, թե արդյոք բուհական ուսման տարիներին, երբ պետք է ձևավորվի ինքնուրույն, արդյունավետ և ստեղծագործաբար մտածող մասնագետ, ինչ փոփոխություններ է կրում կրեատիվ պոտենցիալը, ինչ անձնային հոգեկան առանձնահատկություններ են ընկած դրա հիմքում: Այս խնդիրների պարզաբանման համար իրականացվեց հետազոտական աշխատանք:

Հետազոտությունը կրում է երկայնական (լոնգէտյուդային) բնույթ և անց է կացվել 2001-2002թթ.: Հետազոտությանը մասնակցել են ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի բակալավրիատի 4 կուրսերի ուսանողները:

Կրեատիվությունը ուսումնասիրել ենք թույլ ռեգլամենտացվածություն ունեցող Տորրենսի թեստով: Խնդիրների լուծման ժամանակը սահմանափակ է, սակայն կա պատասխանների ազատություն՝ ճշմարտացիության պայմանով: Կրեատիվությունը նա համարում է 4 առանձնահատկությունների հանրագումար՝ հնարամտություն, միավորելու ընդունակություն, ոչ ստանդարտ (դիվերգենտ) մտածողություն, ազատ ասոցիացիաներ ստեղծելու ընդունակություն: Եվ, հետևաբար, թեստն էլ կառուցված է այդ առանձնահատկությունները չափող 4 բատարեաներից: Հետազոտությունն ուղղված էր նաև փորձարկվողների անձնային առանձնահատկությունների բացահայտմանը և վերջիններիս ու կրեատիվության միջև փոխազդեցության հայտնաբերմանը: Այդ պատճառով անձնային առանձնահատկությունների բացահայտման համար կիրառել ենք Կետտելի 16PF 16 հիմնական և 4 հավելյալ անձնային առանձնահատկությունների չափման մեթոդը: Ստացված արդյունքների վերլուծությունը կատարվել է 3 հիմնական ուղղություններով՝ տարբեր կուրսերի, նույն կուրսի տարբեր տարիների, ըստ կրեատիվության ցուցանիշի բաժանված խմբերի արդյունքների հիման վրա, կատարվել է նաև կրատիվության ցուցանիշների և անձնային հոգեբանական առանձնահատկությունների կոռելյացիոն վերլուծություն:

Ստացված արդյունքների վերլուծության արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1.Առաջին կուրսի ուսանողներն ընդունվում են կրեատիվության նույն ցուցանիշներով՝ մեզ մոտ այն համապատասխանում է 81-82 միավորներին (տես գրաֆիկ 1)

Գրաֆիկ 1




2. Ուսուցման առաջին տարվա ընթացքում գրանցվում է կրեատիվության աճ՝ 15-20 միավորով:

3. Ինչ վերաբերում է երկրորդից երրորդ կուրս անցնելուն, ապա երրորդ կուրսի վերջում դիտվում կրեատիվ կոնֆորմիզացիա՝ կրեատիվության աճը կանգ է առնում:

4. Արդենչորրորդ կուրսում նկատվում է կրեատիվության անկում:

5. Հաստատվում է

նաև այն օրինաչափությունը, որ կրեատիվությունը փոփոխվում է առավելապես ազատ ասոցիացիաներ ստեղծելու ընդունակության հաշվին, իսկ հնարամտությունը և միավորելու ընդունակությունն ավելի հաստատուն որակներ են:

6. Հաստատվում է այն դրույթը, որ ինտելեկտը կրեատիվությունից անկախ գործոն է:

7. Բարձր կրեատիվության խմբում նշանակալի կոռելացիոն կապերն ավելի շատ են, և դա վկայում է բարձրկրեատիվ անձի անձնային առանձնահատկությունների դերի ավելացման մասին:

8. Կրեատիվության աճին զուգընթաց թուլանում է անձնային N պարամետրի ազդեցությունը, իսկ այն բնութագրում է նաիվ, պարզ, անմիջական մարդուն:

9. Կրեատիվության զարգացումը հիմնվում է Q1-ի բարձր արդյունքների վրա, որը բնութագրում է անձի վերլուծականությունը, փորձարարականությունը, լիբերալիզմը, բարձր կուրսերում արդեն նկատվում է կոնսերվատիզմի միտում:

Հաշվի առնելով վերը նշված եզրակացությունները՝ առաջարկում ենք.

1. Բուհական ուսուցման տարիներին հաշվի առնել կրեատիվ պոտենցիալի փոփոխությունները և նպաստել վերջինիս զարգացմանը:

2. Վերոհիշյալ նպատակով ուսումնական գործընթացում կիրառել ստեղծագործական պոտենցիալի զարգացման կրեատիվ տեխնիկաների համակարգեր:

3. Բացի մասնագիտական հմտությունների և գիտելիքների ձևավորումից, ուսումնական գործընթացում ուշադրություն դարձնել նաև ուսանողի անձնային հոգեբանական այնպիսի առանձնահատկությունների ձևավորման վրա, ինչպիսիք են՝ վերլուծականությունը, փորձարարականությունը, լիբերալիզմը:

## Գրականություն


1. Է. դե Բոնո, Նոր մտքի ծնունդը Երևան, 1982:
2. Вертгеймер М. Продуктивное мышление Москва, 1987.
3. Линдсей Г., Халл К. С., Томпсон Р. Ф Творческое и критическое мышление /Хрестоматия по общей психологии. Психология мышления/ Москва, 1981.
4. Тихомиров О. К. Структура мыслителной деятельности человека Москва, 1969.
5. Халперн Д. Психология критического мышления, СПб, 2000.
6. Холодная М. А. Психология интеллекта. Парадоксы исследования Москва-Томск, 1997.
7. Штернберг Р. Дж. Интеллект приносящий успех Минск, 2000.
8. Rouquette M-L. La creativite Presses Universitaires de France, 1995.
9. http://archive.1september.ru/rus/2001/12/2_3.htm.